ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 20-ի թիվ 4 որոշմամբ և հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **«ԷԱՃԱՊՁԲ-2019/12-1-ԵՊԲՀ»**

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԷԱՃԱՊՁԲ-2019/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2019 թվականի փետրվարի 18-ին և 19-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2019 թվականի փետրվարի 20-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1: Հարգելի գործընկեր, Խնդրում ենք պարզաբանել հրավերի 1-ին չափաբաժնի արտաքին սարքերի (տեսախցիկները) հոսանքի սնուցումը ինչպե՞ս է իրականացվելու: Յուրաքանչյուրը առանձին սնուցման աղբյուրների միջոցով, թե՞ նախատեսվում է սնուցել PoE եղանակով: Խնդրում եմ նաև պարզաբանել, եթե սնուցումը իրականացվելու է PoE եղանակով, ապա այդ դեպքում ինչ հեռավորություններ են նախատեսված, որպեսզի կարողանանք համապատասխան սվիչներ և NVR-ներ առաջարկել:

Պարզաբանում N 1: Ի պատասխան ստացված հարցման պարզաբանում ենք, որ հարցման բովանդակությունը չի կարող վերաբերվել հրավերով պահանջված 1-ին չափաբաժնով սահմանված գնման առարկայի տեխնիկական բնութագրին:

Հարցադրում N 2: Հարգելի գնահատող հանձնաժողով, խնդրում եմ պարզաբանել հետևյալը՝ 26-րդ չափաբաժնում նշված կոնֆերանս խոսափողների հավաքածուի տեխնիկական բնութագրով սարքի ռադիո հաճախականությունը նշված է 500-980 մհց միջակայքը: Եթե առաջարկվի 500-900 մհց , կամ 600-930 մհց հաճախականությամբ համակարգեր ընդունելի կլինի թե, ոչ:

Պարզաբանում N 2: Ի պատասխան ստացված հարցման պարզաբանում ենք հետևյալը. եթե առաջարկվող ապրանքի մնացած տեխնիկական բնութագրիչները համապատասխանում են հրավերով պահանջված տեխնիկական բնութագրիչներին, ապա առաջարկվող տիրույթի տարբերությունը համարվի ոչ էական նշանակություն ունեցող և ընդունելի:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Տատյանա Միրզոյանին:

Հեռախոս՝ 060 651 471

Էլ. փոստ՝ procurement.ysmu2@gmail.com

«ԷԱՃԱՊՁԲ-2019/12-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը

Նախագահ՝ _____ Ա.Արշակյան

Անդամներ՝ _____ Գ.Վարդանյան

_____ Ռ.Գալստյան